‘

Ծրագիրը կազմված է ըստ

ՀՀ ԿԳՄՄՆ 24 փետրվարի 2023 թ Հ Ր Ա Մ Ա Ն N 09-Ն-ի

Վանաձորի Ա.Խլղաթյանի անվ. համար18 միջն. դպրոց /ՊՈԱԿ/
կենսաբանության ուսուցիչ՝ Գայանե Վարդանյան

<< ԷԿՈ բնապահպանական խմբակ>> -ի ծրագիր

Հիմնական դպրոցի 7-9 դասարանների սովորողների համար

Շաբաթական ժամաքանակ՝ 2

Ընդհանուր ժամաքանակ՝ 68

ԿԱՐԳԱԽՈՍ

<< Երբ կկտրվի վերջին ծառը, երբ կթունավորվի վերջին գետը,

երբ կսպանվի վերջին թռչունը ,այդժամ դուք կհասկանաք,որ փողը հնարավոր չէ ուտել… >>

Նկարագիր /Բացատրագիր/

<< ԷԿՈ բնապահպանական խմբակը >> համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: <<ԷԿՈ բնապահպանական խմբակի>> պարապմունքները նպաստում են սովորողների բնապահպաական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը : <<ԷԿՈ բնապահպանական խմբակի>> -ի ծրագիրը ուղղված է սովորողի բազմակողմանի զարգացմանը և դաստիարակությանը, նրա ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը, դիտողականության, հետազոտական ունակությունների զարգացմանը: Այն ուղղված է խոսքի տարբեր ձևերի զարգացմանը՝երկխոսություն, նկարագրություն, բացատրություն, բնապահպանական պատմվածք և այլն: Տեսական և ակտիվ ուսման ձևերի համադրում /խաղ, զրույց, բանավեճ, քննարկում, արշավներ, էքսկուրսիաներ, թրեյնինգներ, կլոր սեղաններ, քայլարշավներ, էկոլոգիական բանավեճեր, բնապահպանական ակցիաներ/: ԷԿՈ ճանաչողական խմբակի պարապմունքները օգնում են,որ սովորողը կարողանա.

1) Նկարագրի բնության, բնակչության և տնտեսության միջև եղած փոխադարձ կապերը և դրանց արդյունքում ձևավորված համակարգերը. (ՀՊՉ IV /17):

2) Նկարագրի կայուն զարգացման էությունը, հիմնական գաղափարները ու դրանց փոխադարձ կապերը(ՀՊՉ IV /18):

3) Ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ (ՀՊՉ IV /29):

Հիմնական գաղափարները, որոնց վրա հիմնվում է ծրագիրը.

Գիտական – կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության և էկոլոգիայի հիմնական օրենքները, դրանց միասնությունը, կենդանական աշխարհի կապի անխզելիությունը, կենդանի օրգանիզմի կախվածությունը շրջապատող բնությունից և նրա ազդեցությունը էկոհամակարգի վրա:

Մանկավարժական — Այս տարիքում դեռահասների մոտ դեռևս բավարար չափով չի ձևավորված ինքնուրույն գործողությունների հմտությունները: Այդ պատճառով հանձնարարությունները ունեն այնպիսի բովանդակություն և այնպիսի խմբերից են կազմված, որ պահանջվող խնդիրները նրանք կարողանան լուծել, ինչը թույլ կտա նրանց այդ տարիքում այնքան կարևոր բարձր ինքնագնահատմանը և ինքնահաստատմանը:

Սոցիալական — Տեխնիկայի սրընթաց զարգացմանը զուգահեռ շատ կենդանի օրգանիզմների գոյությունը դրված է վտանգի տակ: Էկոլոգիական խնդիրները իրենցից մեծ վտանգ են ներկայացնում հասարակության, նրա ֆիզիկական և հոգեբանական առողջության համար: Այդ պատճառով էլ սովորողների մոտ կձևավորվի համագործակցային աշխատանք կատարելու անհրաժեշտությունը **:**

Նախատեսվում է դասընթացը կազմակերպել ակտիվ ուսուցման մեթոդներով: Հիմնական նյութը սովորողների կողմից յուրացվում է դասի ընթացքում: Դասի կազմակերպման հիմնական ձևերը տեսական և գործնական պարապմունքներն են: Համապատասխան թեման կարող է տրվել առարկայական առանձին մոդուլների միջոցով:Սովորողները որպես առաջադրանքներ կատարում են ուսումնահետազոտական աշխատանքներ և ուսումնասիրություններ էկոլոգիական տարբեր թեմաներով:Ուսուցման ձևերից են նաև արտադասարանական աշխատանքները, միջոցառումները, էքսկուրսիաները և արշավների կազմակերպումը դեպի բնություն, հիդրոէլեկտրակայաններ, ջերմակայաններ, տարբեր արտադրական ձեռնարկություններ:

Ցուցահանդեսների և ակցիաների մասնակցություն և կազմակերպում:

Նպատակը

1) Ներկայացնել բնապահպանական հիմնախնդիրները:

2) Ձևավորել և զարգացնել բնապահպանական խնդիրները լուծելու ունակություն և հմտություն :

3) Նպաստել հասկանալու էկոլոգիայի հիմնախնդիրների էությունը և սովորողների աշխարհայացքի ինքնուրույն ընտրության: Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն մարդկության և բնական միջավայրի նկատմամբ

4) Արժևորել մարդու դերը բնապահպանական գործընթացներում :Արժևորել մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորել սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսական հիմք :

Վերջնարդյունքները

ա/ Սովորողները կիմանան, թե ինչպես և ինչու է մարդը փոխակերպել շրջակա աշխարհը, տարրական գիտելիքներ կստանան մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության ու իր կյանքում բնության դերի մասին :

բ/ Հոգատար վերաբերմունք կդրսևորի բնության հանդեպ :

գ/ Կարողանա օրինակներով հիմնավորել մարդու կախվածությունը շրջակա միջավայրից:

դ/ Հասկանա շրջակա միջավայրի աղտոտվածության (նաև թափոնների) հասցրած վնասը էկոհամակարգերին:

ե/Կարողանա մեկնաբանել սեփական և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները:

զ/ Կարողանա մեկնաբանել, թե ինչպես է մարդու գործունեությունն ազդում բնության վրա, թե ինչու պետք է խնայել բնական ռեսուրսները մարդու առօրյայում:

դ /կարողանա ճանաչել բնության հատուկ պահպանվող տարածքները, և առանձին բնական օբյեկտները, որոնք բնապահպանական, գիտական, կրթական, առողջապահական, պատմամշակութային, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում

Պահանջվող նյութատեխնիկական բազան

ՏՀՏ գործիքներով հագեցած դասասենյակ , Էքսկուրսիաներ համար տրնսպորտային միջոց :

ԾՐԱԳԻՐ

/Թեմատիկ տարեկան պլանավորում

Հ	Բովանդակությունը	նպատակը	Ժամաքանակը	Նշումներիհամար
1.	էկոլոգիա և բնապահպանություն հիմնախնդիրները	Համակարգել բնապահպանական գիտելիքները: Զնավորել քննադատական: մտածողություն դրանց լուծման համար :	5	
2.	Բնապահպանության ոլորտի օրենսդրություն	Հասնել նրան, որ սովորողները իմանան, հասկանան ինչին է ուղղված բնապահպանության օրենսդրությունը:	6	
3.	Ծանոթացում ՄԱԿ-ի Կայուն Զարգացման Նպատակներին	Զնավորել, ամրապնդել, ունակություններ ՄԱԿ –ի ԿԶ նպատակների իրագործման համար :	6	
4.	Ջուր, ջրոլորտ	Ընդհանրացնել ջրի մասին ունեցած նախնական գիտելիքները : Զնավորել հմտություններ ջուրը մաքուր պահելու և խնայողաբար օգտագործելու համար:	8	
5.	Օդ, մթնոլորտ, մթնոլորտի աղտոտում, ջերմոցային էֆեկտ, օզոնային շերտի քայքայում և կլիմայի փոփոխություն	Ընդհանրացնել օդի,մթնոլորտի աղտոտման մասին մասին ունեցած նախնական գիտելիքները: : Զնավորել, ամրապնդել .մթնոլորտը մաքուր պահելու .. ունակությունները:	10	
6.	Մաքուր միջավայր,ամուր առողջություն	Հասնել նրան, որ սովորողները արժևորեն	5	

		միջավայրի դերը առողջ լինելու համար :		
7.	Էներգախնայողությունը և շրջակա միջավայրի պահպանությունը	Նպաստել էներգիախնայողության հմտությունների զարգացմանը:	5	
8.	Ինչ է թափոնը:Թափոնների տեսակավորում	Ձևավորել թափոնների տեսակավորման հմտություններ,նպաստել աշակերտների՝ շրջակա միջավայրի հանդեպ հոգածության և հմտությունների ձևավորմանը:	4	
9.	«Էկոլոգիական սնունդ» ավանդականից անցում օրգանականի	Ձևավորել առողջ սննդի օգտագործման կուլտուրա: Նպաստել սովորողների գիտելիքների զարգացմանը. ԳՄՕ –ի թերությունների և առավելությունների մասին :	4	
10	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	Ձևավորել, ամրապնդել կարողություններ տարբերելու բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ նշանակության և օգտագործման	4	
11	Հետազոտական աշխատանքի թեմաների ընտրություն	Նպաստել հասկանալու էկոլոգիայի հիմնախնդիրների էությունը, խթանել սովորողների աշխարհայացքի ինքնուրույն ընտրությանը:	1	

12	Շրջակա միջավայրի մոնիթորինգ:	Ձևավորել և զարգացնել բնապահպանական խնդիրները լուծելու ունակություն և հմտություն:	7	
13	Հետազոտական աշխատանքի ներկայացում	Զարգացնել բնապահպանության հիմնախնդիրները ներկայացնելու կարողություն, հմտություն :	3	

Օգտագործված գրականության ցանկ

. 1 Խ. Միրիմանյան, Բնության պահպանության հիմնական խնդիրները, 1979թ.

.2 Էներգախնայողություն, ՝Ազգային լրացում, Հայաստան՝ ԷՌՕԴԾ, 2006թ

3 Ռ. Մարուխյան, Ա. Հովսեփյան ՝Անձի էկոլոգիական կուլտուրան՝, 2005թ.

4 ՝Միտք սերմանելը նույնն է, թե ծառ տնկես ՝, բնապահպանական կրթության ձեռնարկ, 2007թ.

5 Մ. Դավթյան «Շրջակա միջավայր և բնապահպանություն»,2010թ.

6 Ամսագիր «Բնագետ»

8 https://nabu.am/hy/news/159

9 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788